INGO

VTB

ԴԺԲԱԽՏ ՊԱՏԱՀԱՐՆԵՐԻՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ

ԷԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ

Դժբախտ պատահար է համարվում արտաքին, կարճաժամկետ (մինչև մի քանի ժամ), չմտադրված, անկանխատեսելի պայմանների և հանգամանքների վուգադիպումը, որոնց դեպքում Ձեր կամքից անկախ վնաս է հասցվում Ձեր կյանքին կամ առողջությանը:

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ «ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ԱՓԲԸ

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Հանրապետության փ. 51, 53, Տարածքներ 47, 48, 50
Հեռ.՝ (+374 10) 59 21 21
Կայք՝ www.ingoarmenia.am

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐՆԵՐ ԵՆ ՀԱՄԱՐՎՈՒՄ

Դժբախտ պատահարի հետևանքով՝

- Աշխատունակության ժամանակավոր կորուստ,
- Հաշմանդամության I, II, III կարգ,
- Մահ:

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏ

Ապահովագրության վկայագիրը կնքվում /վերակնքվում է վարկի գործողության ողջ ժամկետում՝ բացառությամբ վարկային պայմանագրով սահմանված դեպքերի:

ՈՐՔԱՆ Է ՀՀԱՏՈՒՑՎՈՂ ԳՈՒՄԱՐԸ

Յուրաքանչյուր դեպքի գծով 20,000 ՀՀ դրամ:

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Ապահովագրության պայմաններին ավելի մանրամասն կարող եք ծանոթանալ «ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ԱՓԲԸ Խորհրդի կողմից 25.11.2008թ. հաստատված Դժբախտ պատահարներից ապահովագրության կանոններում՝ այցելելով ապահովագրական ընկերության պաշտոնական կայքը:

ՈՐՏԵՂ Է ԳՈՐԾՈՒՄ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ՀՀ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐԻ ՀԱՓԸ

Կարգավորվում է Ձեր վարկային պայմանագրով և/կամ հրապարակային օֆերտայով սահմանված պայմաններով:

ՈՐՔԱՆ Է ԿԱՁՄՈՒՄ ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐԸ

Համաձայն վարկային պայմանագրի՝ Ձեր կողմից ապահովագրավճար չի վճարվում:

ԻՆՉ ՔԱՅԼԵՐ Է ԱՆՀՐԱԺԵՇՏ ՁԵՌՆԱՐԿԵԼ ՊԱՏԱՀԱՐԻ ԴԵՊՔՈՒՄ

- Պատահարի տեղի ունենալուց կամ հայտնի դառնալու պահից հետո անհապաղ, սակայն ոչ ուշ, քան 30 օրվա ընթացքում անհրաժեշտ է կանգահարել (+374 10) 59 21 21 հեռախոսահամարով,
- Կատարել ապահովագրական ընկերության ցուցումները,
- Համաձայն ցուցումների հնարավոր է անհրաժեշտություն առաջանա ներգրավել Ոստիկանություն, ԱԻՆ կամ այլ իրավասու մարմինների:

ՈՐՈՆՔ ԵՆ ՀԱՏՈՒՑՈՒՄ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Պատահարի մասին ապահովագրական ընկերությանը տեղեկացնելուց հետո 60 օրվա ընթացքում դիմել ընկերության վանգերի կենտրոն հատուցման դիմում լրացնելու նպատակով և լրացված դիմումի լուսապատճենը կամ լուսանկարն ուղարկել dimum@ingoarmenia.am էլ. հասցեին կամ VIBER հավելվածով՝ (+374 44) 410 723 հեռախոսահամարին,
- Ներկայացնել անհրաժեշտ փաստաթղթերը,
- Սպասել ապահովագրական ընկերության հետագա ցուցումներին,
- Հատուցման կամ մերժման որոշումը կայացվում է հայտի կարգավորման համար բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը ստանալու պահից 30 բանկային օրվա ընթացքում,
- Հատուցման գումարը վճարվում է հատուցման որոշում կայացնելուց հետո 30 բանկային օրվա ընթացքում:

ՈՐ ԴԵՊՔԵՐԸ ՀԱՏՈՒՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՉԵՆ

Ցանկացած պարագայում, հատուցման ենթակա չեն այն վնասները, որոնք առաջացել են հետևյալի արդյունքում.

- Սահմանված ժամկետում ապահովագրական ընկերությունը և համապատասխան իրավասու մարմինները չեն տեղեկացվել ապահովագրական պատահարի մասին,
- Ապահովագրական հայտի կարգավորման համար անհրաժեշտ փաստաթղթերը և տեղեկությունները ժամանակին չեն ներկայացվել, որոնք անհրաժեշտ են ապահովագրական պատահարի հայտանիշեր ունեցող իրադարձության բնույթի և պատճառների հաստատման համար կամ նախապես ներկայացվել են կեղծ ապացույցներ,
- Գրավոր դիմում ներկայացնելու օրվանից հետո 2 ամսվա ընթացքում չեք ներկայացրել հատուցման համար պահանջվող բոլոր փաստաթղթերը,
- Ապահովագրված անձի ալկոհոլային, թմրադեղային կամ տոկսիկ թունավորման հետևանքով նրա կողմից թմրադեղային ուժեղ ազդեցություն ունեցող և հոգեմետ նյութերի օգտագործման դեպքում առանց բժշկի նշանակման (կամ բժշկի նշանակմամբ, բայց նրա կողմից սահմանված չափերի խախտմամբ),
- Ապահովագրված անձի կողմից ինքնասպանություն կատարելիս, եթե այդ պահին պայմանագիրը գործել է երեք տարուց պակաս (կամ անընդմեջ չի գործել երկու տարվա ընթացքում): Բացառություն են կազմում այն դեպքերը, որոնք երրորդ անձանց անօրինական գործողությունների հետևանքով ապահովագրված անձին ստիպել են դիմել ինքնասպանության,
- Ապահովագրված անձի կողմից քրեական հանցագործություն կատարելիս, որն ուղղակիորեն կապված է ապահովագրական պատահարի հայտանիշեր պարունակող իրադարձության հետ,
- Ապահովագրված անձի կողմից առանց համապատասխան դասի տրանսպորտային միջոցի վարելու իրավունքի տրանսպորտային միջոց վարելիս կամ ղեկը այլ անձի փոխանցելիս, ով չունի տրանսպորտային միջոցը վարելու իրավունք կամ ալկոհոլի, թմրադեղերի ազդեցության տակ տրանսպորտային միջոցը վարելիս,
- Ապահովագրված անձի կողմից միտումնավոր գործողություններ կատարելիս,
- Հղիության և դրա արհեստական դադարեցման, ծննդաբերության, ատամների բուժման, պլաստիկ կամ կոսմետիկ վիրահատությունների հետևանքով հոսպիտալացման (եթե դրանց անհրաժեշտությունը դժբախտ պատահարի հետևանք չէ), հոգեկան և թմրադեղային հիվանդությունների,
- Ապահովագրված անձի կողմից օդային ճանապարհորդություն կատարելիս, բացառությամբ եթե նա հանդիսանում է լիցենզավորված առևտրային ինքնաթիռի ուղևոր,
- Վտանգավոր սպորտաձևերով պրոֆեսիոնալ զբաղվելիս,
- Միջուկային պայթյունի, ճառագայթման կամ ճառագայթումից վարակման արդյունքում,
- Ռազմական գործողությունների կամ դրանց հետևանքների, ժողովրդական հուզումների, քաղաքացիական պատերազմների հետևանքով, ինչպես նաև զինված ուժերում ծառայելու ընթացքում ապահովագրված անձի կողմից ռազմական հավաքներին մասնակցելիս,
- «ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ԱՓԲԸ Խորհրդի կողմից 25.11.2008թ. հաստատված Դժբախտ պատահարներից ապահովագրության կանոններով սահմանված այլ դեպքերում:

ԿԱՐԵՎՈՐ Է ԻՄԱՆԱԼ

Ապահովագրական ընկերության հատուցման որոշման հետ համաձայն չլինելու դեպքում Դուք իրավունք ունեք դիմել Ֆինանսական համակարգի հաշտարարին, Կենտրոնական բանկ, Դատարան/Արբիտրաժային դատարան:

Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից: